ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2

**ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-24/23 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով տեխնիկական հսկողության ծառայությունների /(«Գ. Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոն» ՊՈԱԿ-ի մասնաշենքի մասնակի վերանորոգման աշխատանքների)/ գնման գործընթացի գնահատող հանձնաժողովի նիստի**

**Հայտերի բացումը տեղի ունեցավ 27.12.2023թ. ժամը 12:30-ին էլեկտրոնային գնումների www.armeps.am կայքի միջոցով:**

**Գնահատող հանձնժողովի կազմը.**

Հանձնաժողովի նախագահ՝ Մասիս Աղայանց /գնահատող/

Հանձնաժողովի անդամ՝ Հովսեփ Գրիգորյան /գնահատող/

Հակոբ Մուրադյան /գնահատող/

Արմեն Քոչարյան /բացող/

Արտյոմ Պետրոսյան /բացող/

Հանձնաժողովի քարտուղար՝ Աննա Սիմոնյան

**1. Տեղեկատվություն օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի հիմնավորումների մասին.**

1.1 **ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-24/23** ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի վերաբերյալ հիմնավորումներ չեն ներկայացվել:

**2. Տեղեկատվություն հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.**

2.1 ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից էլեկտրոնային եղանակով կազմակերպված **ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-24/23** ծածկագրով գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

| Հ/Հ | Մասնակիցների անվանումները | Էլ. Հասցեները |
|---|---|---|
| 1 | «Սերպանտին Ինժենիրինգ» ՍՊԸ | koshtoyansamvel@gmail.com |
| 2 | «ՌԻՋԻԴ» ՍՊԸ | rigidalgroup@gmail.com |
| 3 | «ՄԻԿԱՆ» ՍՊԸ | Mikkar89@mail.ru |
| 4 | «ՀՏ-ՊՐՈՅԵԿՏ» ՍՊԸ | |

| | | |
|---|---|---|
| 5 | «ՏԻԳԱ ԻՆԴԱՍԹՐԻԶ» ՍՊԸ | tigaindus@gmail.com |
| 6 | «Բուլգարո» ՍՊԸ | bulgarollc@yandex.ru |
| 7 | Ա/Ձ Վահրամ Կնյազյան | knyazjanvvs@mail.ru |

**3. Տվյալներ հայտերի կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության մասին.**

3.1 Մասնակիցների կողմից ներկայացված հայտերը կազմվել և ներկայացվել են հրավերի պահանջներին համապատասխան:

**Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:**

**3.2** «ՀՏ-ՊՐՈՅԵԿՏ» ՍՊԸ-ն, հայտը ներկայացնելու օրվա դրությամբ, ներառված է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

**Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:**

**4. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը.**

| Հ/Հ | Նախահաշվային գինը, ՀՀ դրամ | Մասնակիցների անվանումները | Վերջնական Առաջարկված գինը, ՀՀ դրամ | |
|---|---|---|---|---|
| | | | Առանց ԱԱՀ | Ներառյալ ԱԱՀ |
| 1 | 571070 | «Սերպանտին Ինժենիրինգ» ՍՊԸ | 217000 | 217000 |
| | | «ՌԻՋԻԴ» ՍՊԸ | 120000 | 120000 |
| | | «ՄԻԿԱՆ» ՍՊԸ | 55000 | 55000 |
| | | «ՀՏ-ՊՐՈՅԵԿՏ» ՍՊԸ | 150000 | 150000 |
| | | «ՏԻԳԱ ԻՆԴԱՍԹՐԻԶ» ՍՊԸ | 145000 | 145000 |
| | | «Բուլգարո» ՍՊԸ | 88000 | 88000 |
| | | Ա/Ձ Վահրամ Կնյազյան | 400000 | 400000 |

**5. Մասնակիցների ներկայացրած փաստաթղթերի՝ առկայության և սահմանված պայմաններին համապատասխանության գնահատման մասին.**

**5.1** Մասնակցի ներկայացրած փաստաթղթերի առկայության, սահմանված պայմաններին համապատասխանության գնահատման արդյունքների արձանագրման նպատակով հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել հանձնաժողովի կողմից փաստաթղթերը հրավերով սահմանված ժամկետում ուսումնասիրելուց հետո, բայց ոչ ուշ քան 2024թ հունվարի 15-ին, ժամը 12:30-ին:

**Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:**

**Գնահատող հանձնաժողովի նիստը շարունակվեց 15.01.2024թ. ժամը 12:30-ին**

**6. Տվյալներ մասնակիցների հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության և սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.**

6.1 **«ՄԻԿԱՆ» ՍՊԸ**-ի և **«ՏԻԳԱ ԻՆԴԱՍԹՐԻԶ» ՍՊԸ-ի** կողմից ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը, ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

**Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:**

6.2 **Վահրամ Կնյազյան Ա/Ձ-ի կողմից** ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը, սակայն ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես՝ Հավելված 2 Գնային առաջարկում գնման ընթացակարգի ձևը նշված է սխալ, ինչը շտկման ենթակա չէ:

**Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:**

6.3 **«Բուլգարո» ՍՊԸ**-ի կողմից ներկայացված հայտում առկա են չեն հրավերով պահանջվող փաստաթղթերը, մասնավորապես՝

6.3.1 Բացակայում է նախկինում կատարված նմանատիպ պայմանագիրը (պայմանագրեր), իսկ այդ պայմանագրի (պայմանագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի (պայմանագրերի կամ համաձայնագրերի) սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտերի (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) պատճեները կամ տվյալ պայմանագրերի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

6.3.2 Բացակայում է կնքվելիք պայմանագրի կատարման համար առաջարկվող աշխատակազմի մասին տեղեկանքը և կից ներկայացվող աշխատակազմում ներգրավված մասնագետների հաստատած գրավոր համաձայնությունները՝ մատուցվող ծառայություններում վերջիններիս ներգրավվելու մասին, ինչպես նաև մասնագետների անձնագրերի և որակավորումը հավաստող փաստաթղթերի (դիպլոմ, վկայագիր, հավաստագիր, արտոնագիր և այլն) պատճենները:

**Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:**

6.4 **«ՌԻՋԻԴ» ՍՊԸ**-ի կողմից ներկայացված հայտում առկա են չեն հրավերով պահանջվող փաստաթղթերը, մասնավորապես՝

6.4.1 Բացակայում է նախկինում կատարված նմանատիպ պայմանագիրը (պայմանագրեր), իսկ այդ պայմանագրի (պայմանագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի (պայմանագրերի կամ համաձայնագրերի) սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտերի (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) պատճեները կամ տվյալ պայմանագրերի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

6.4.2 Բացակայում է կնքվելիք պայմանագրի կատարման համար առաջարկվող աշխատակազմի մասին տեղեկանքը և կից ներկայացվող աշխատակազմում ներգրավված մասնագետների հաստատած գրավոր համաձայնությունները՝ մատուցվող ծառայություններում վերջիններիս

ներգրավվելու մասին, ինչպես նաև մասնագետների անձնագրերի և որակավորումը հավաստող փաստաթղթերի (դիպլոմ, վկայագիր, հավաստագիր, արտոնագիր և այլն) պատճենները:

**Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:**

**6.5 «Սերպանտին Ինժենիրինգ» ՍՊԸ-ի** ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը, սակայն ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես՝ նախկինում կատարված նմանատիպ պայմանագիրը թերի է, ինչը հնարավորություն չի տալիս այն գնահատել որպես պատշաճ կատարված:

**Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:**

**7. Գնահատման գործընթացի կասեցման մասին.**

**7.1** Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ կասեցնել գնահատման գործընթացը և առաջարկել **«Բուլգարո» ՍՊԸ-ին, «ՌԻՋԻԴ» ՍՊԸ-ին և «Սերպանտին Ինժենիրինգ» ՍՊԸ-ին** մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել 6.3-6.5 կետերով արձանագրված անհամապատասխանությունները:

**Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:**

**7.2** Հանձնաժողովի նիստը շարունակել մասնակիցների կողմից փաստաթղթերը ստանալուց և ուսումնասիրելուց հետո՝ 2024թ հունվարի 19-ին, ժամը 14:00-ին:

**Ընդունվել է որոշում՝ կողմ 5 դեմ 0:**

**Գնահատող հանձնաժողովի նիստը շարունակվեց 19.01.2024թ. ժամը 14:00-ին**

**8. Գնման գործընթացի գնահատման ընթացքում արձանագրված անհամապատասխանությունների շտկման մասին.**

**8.1 «Բուլգարո» ՍՊԸ-ն, «ՌԻՋԻԴ» ՍՊԸ-ն և «Սերպանտին Ինժենիրինգ» ՍՊԸ-ն** սահմանված ժամկետում շտկել են հանձնաժողովի կողմից 6.3 - 6.5 կետերով արձանագրված անհամապատասխանությունները:

**Ընդունվել է որոշում՝ կողմ 5 դեմ 0:**

**9. Տվյալներ առաջին և հաջորդաբար այլ տեղեր զբաղեցրած և մերժված մասնակիցների մասին.**

**9.1** Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածը՝ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից.

1-ին տեղ զբաղեցրած (ընտրված) մասնակից ճանաչել **«ՄԻԿԱՆ» ՍՊԸ-ին,**

2-րդ տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել **«Բուլգարո» ՍՊԸ-ին,**

3-րդ տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել **«ՌԻՋԻԴ» ՍՊԸ-ին,**

4-րդ տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել **«ՏԻԳԱ ԻՆԴԱՍԹՐԻԶ» ՍՊԸ-ին,**

5-րդ տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել **«Սերպանտին Ինժենիրինգ» ՍՊԸ-ին:**

**Ընդունվել է որոշում՝ կողմ 5 դեմ 0:**

**9.2** Հիմք ընդունելով սույն արձանագրության 3.2 կետը՝ մերժել «ՀՏ-ՊՐՈՅԵԿՏ» ՍՊԸ-ի հայտը՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառված լինելու պատճառով:

**Ընդունվել է որոշում՝ կողմ 5 դեմ 0:**

**9.3** Հիմք ընդունելով սույն արձանագրության 6.2 կետը՝ մերժել «Վահրամ Կնյազյան Ա/Ձ-ի հայտը՝ հրավերի պայմաններին չհամապատասխանելու հիմնավորմամբ:

**Ընդունվել է որոշում՝ կողմ 5 դեմ 0:**

**10. Գնահատման արդյունքների մասին.**

**10.1** Հրապարակել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն անգործության ժամկետ սահմանել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը, որից հետո ընտրված մասնակցին էլեկտրոնային ձևով գնումների կազմակերպման կարգին համապատասխան՝ ARMEPS համակարգով, ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:

**Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:**

**10.2** Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը՝ պատվիրատուի ղեկավարին ներկայացնել **«ՀՏ-ՊՐՈՅԵԿՏ» ՍՊԸ** -ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ որոշման նախագիծ:

**Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:**

**Գնահատող հանձնաժողով՝**

---------- Մասիս Աղայանց /նախագահ/

---------- Հովսեփ Գրիգորյան

---------- Հակոբ Մուրադյան

---------- Արմեն Քոչարյան

---------- Արտյոմ Պետրոսյան

---------- Աննա Սիմոնյան /քարտուղար/